

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՊՈՐՆԵՐ.

Երբ հրէաները Կիւրոսի թոյլտուութեամբ 537 ին իրանց հայրենիքը վերադարձան գերութիւնից ազատուած, *) Մովսէսի գրած օրէնքը հետզհետէ թէ ըստ բովանդակութեան և թէ ըստ ծաւալին, որպէս Աստուծոյ օրէնք, սրբութեամբ էր պահպանուիմ հրէից մէջ. որոնք խստիւ հետամուտ էին լինում օրէնքի կատարման: Հետզհետէ Մովսէսի հնգամատեանի հետ աւելցան մարգա-

(*) Առհասարակ ընթերցողներին մի համառօտ գաղափար տալու համար հրէից ի գերութիւն տարուելու մասին, յառաջ կը բերենք մի համառօտ պատմական հետազօտութիւն մասամբ Ս. Գրքից և մասամբ ևս սեպագրութիւններից քաղելով: Այս տեղ խօսքս կը լինի ասորեկան և բաբելական գերութեան մասին: Ասորեստանի և Բաբելոնի տիրապետութեանց ժամանակ գլխաւոր միջոց էր համարվում նուաճած երկրներից նշանաւոր անձինքներին և երբեմն մինչև անգամ մի քաղաքի բնակիչներին ամբողջապէս ի գերութիւն վարելը, որով նոքա իրանց տէրութիւնը ապահովացնումէին ապստամբութեան ձգտող անձինքներից: Շատ հասկանալի է, որ ամբողջ մի ցեղ, մի ազգ գերի տարուելով օտար երկիր՝ պիտի կամայ ակամայ իւր ազգութեան յատկանիշները կորցնէր և խառնուէր տեղացի բնակիչների հետ ընդունելով նոցա կրօնը, սովորութիւնները և լեզուն, այսպիսով նա իւր քաղաքական ոյժը ևս պիտի թուլացնէր: Մենք այս տեղ մեր ուշքը կը դարձնենք թէ քանանական ազգի և թէ Իսրայէլի և Յուդայի թագաւորութիւնների ի գերութիւն տարուելուն և յաքսորս ուղարկուելու վերայ:

I Իսրայէլի Թագաւորութիւն.— Ա. Տիգլաթպիլէզեր Բ. Աքաազի ինդրանօք, նորան օգնութեան է գնում ընդդէմ Բեցինի և Փեքահի, և վերջինիցս առնումէ 733-ին Մերում և Գեհենեսարէթ լճերի մէջ գրտնուած քաղաքները, և միջի ազգաբնակչութիւնները տեղափոխումէ.— Բ. Սարգոն՝ Սամարիան նուաճելուց յետոյ 27,280 բնակիչ տեղափոխումէ (Բ. Թագ. 17, 6. 18, 11) Գալափ և բնակեցնում Գալափում, Թափօրի և Գոցան գետի մօտերը, և Մարաստանի մի քանի քաղաքներում: Իսկ նոցա տեղը Սարգոն, Ասարադգոն և Ասուրբանիրալ թագաւորները բնակեցրին բաբելական, արաբական, էլամական և ուրիշ շատ ցեղեր, որոնք իմիասին կազմումէին Սամարացիների մի խառն ազգը:



բէական և ուրիշ սուրբ գրուածներ, բոլորը միասին երեք մասից բաղկացած մի բիբլիական կողերս էին կազմում: Այս կողերսը Քրիստոսից առաջ պիտի արդէն կազմուած լինի, որովհետեւ Նոր Կտակարանում (Ղուկ. 24, 44) բոլորովին պատրաստ է ներկայանում մեզ: Այս կողերսի Ա. մասը կազմումէր օրինաց գիրքը կամ Մովսէսի հնգամատեանի ժողովածուն, Բ. մասը — մարգարէութիւններ՝ որոնք բաժանւումէին 2 մասի անբաժնի (առաջին մարգարէների գործունէութեամբ յառաջացած պատմական գրքեր) և երկու (այսինքն առաջին չորս մեծ մարգարէներ և 12 փոքր մարգարէներ): Այս երկուսի հետ աւելցաւ մի երրորդ մաս,

II Յուդայի թագաւորութիւն. — Ա) Սանքերիբ 701 ին քանանական պատերազմում նուաճումէ Յուդայի 46 ամուր պարսպաւոր քաղաքները և շատ բազմաթիւ գիւղերն ու անտառները, և ի գերութիւն է վարում յԱսորեստան 200,150 բնակիչ: — Բ) Երբ Փարաւոն Նեփաւովից հաստատուած Յուդայի թագաւոր Յովակիմը մերժումէ Բաբելոնի թագաւորներին հարկ տալը որպէս հպատակ տէրութիւն՝ Նաբուգոդոնոսոր 598 ին գալիսէ Երուսաղէմի վերայ պատերազմի: Այդ միջոցին Յովակիմը մեռած լինելով նորա տեղ նստել էր իւր 18 ամեայ որդին Յեքոնիայ, որը ստիպուած պիտի Երուսաղէմի դռները բաց անէր Նաբուգոդոնոսորի առաջ, որ իւր թագաւորութեան 8 թղ տարին գերի վարեց ի Բաբելոն Յեքոնիային, նորա մօրը, կանանցը, որդիներին, թոռներին և առաջաւոր մարդիկներին, սոյնպէս և Երուսաղէմի բոլոր բնակիչներին իրանց իշխանների հետ միասին՝ որոնց թիւը 10,000 ի էր հասնում բացի կանանցից և մանուկներից, յետոյ 7000 զինուոր, և 1000 դարբին և վերջապէս տաճարի ու պալատի բոլոր գանձերն ու իրեղէնները հետն առած՝ դառնումէ ի Բաբելոն թողնելով Երուսաղէմում սակաւաթիւ ժողովուրդ (Բ. Թագ. 24, 10—16):

Բ), Երբ Փարաւոն Հոփրան գահը բարձրացաւ, Յեքոնիայի հօրեղբայր Սեդեկիան, որ Նաբուգոդոնոսորի ձեռքով Յուդայի վերայ թագաւոր էր հաստատուած, կարծումէր, որ եթէ Եգիպտացիների հետ դաշն հաստատէ՝ կարողէ անկախութիւն ձեռք բերել, ուստի և իւր թագաւորութեան 8/9 տարին ապստամբումէ Նաբուգոդոնոսորի դէմ, չը լսելով բնաւ Երեմիայի տուած խորհուրդին: Նաբուգոդոնոսոր 589-ին ուղարկումէ Ներուսարադան զօրավարին, որ Երուսաղէմ պաշարէ: Նա՝ 1 1/2 տարի պաշարելուց զկնի առնումէ Երուսաղէմ և Սեդեկիային գերի բռնած՝ տանումէ իւր ընտանիքի հետ Նաբուգոդոնոսորին, որը նորա որդիքներին իւր աչքի առաջ սպանել տուեց, իսկ հօրը կուրացընել տալով՝ զրկեց Բաբելոն, ուր և բանտի մէջ մեռնումէ: Ներուսարա-

Ա. Գիրք կոչուած, որի մէջ ամենանշանաւորը սաղմոսների գիրքը համարուեց (Ղուկ. 24 44): Սոքա բոլորը կոչվումէին Ա. գրքի (բիրյիայի) կանոնական գրքեր: Այս բաժանումը յիշվումէ արգէն Մակաբայեցիների Բ. Գրքում և Յեսուայ Արաքում, իսկ Յովսէփոսի մէջ երևումէ, որ նա քսան և երկու գրուածների թիւը քննումէ, որպէս մի ամբողջի: Իսկ այն գրուածները՝ որոնք մեզ Ա. Գրքից դուրս յայտնի են, յառաջացած են յետին ժամանակներում և կոչվում են ապոկրիֆ (թագուցած գրքեր), որոնք աստուածապաշտութեան ժամանակ չէին կարգացվում:

Երբոր Ա. գիրքը խմբագրուեց, այն ժամանակից ի վեր սկսան լրջութեամբ հետևել բիրյիական կանոններին մանաւանդ օրինական մասերին, և այս ձգտումը այնպէս սաստիկ եղաւ, որ սկսեցին Ա. գրքի ամեն մի բառը ճշտիւ պահել և կատարել: Բայց որովհետև ամեն մի բառ բացատրութիւն էր պահանջում և մեծ մա-

քան կողոպտումէ տաճարը և յետոյ տիրում. քանզի է տալիս Երուսաղէմի պարիսպները և կրակից և սուրից աղատուած ժողովուրդին ու զօրքին, բացի այգեպաններից և երկրագործներից, բոլորին գերի է վարում Երուսաղէմից:—Գերի տարուած Իսրայէլացիների և Յուդայի թագաւորութեան ժողովրդոց վիճակի մասին պատմութիւնը մեզ մի որոշ դադափար չէ տալիս: Միայն հետևեալն է յայտնի, որ աքսորուածների վիճակը ըստ երևութին, բաւական տանելի էր. և հետզհետէ աւելի տանելի էր դառնում, քանի որ նոքա բոլորովին կտրել էին հայրենիք վերագառնալու յոյսը: Երեմիա մարգարէն Յեքոնիայի հետ աբսորուածներից պահանջումէր նամակով և համոզում՝ որ տներ շինեն, այգիներ տնկեն, պսակուելով աճեն և բազմանան, բնակելու համար ամենալաւ քաղաքը ընտրեն. իսկ ինքը տիրոջ կաղօթէ նոցա բարեւաւթեան համար (Երեմ. 29, 5—7): Նաև նոցա մխիթարում և ասումէր որ—70 տարուց յետոյ նոքա պիտի վերագառնան, նոյնպէս Եզեկիէլ մարգարէն աքսորուածների միջից իւր ազգու խօսքով քաջալիր էր կարգում գուշակելով, որ նոքա շուտով պիտի վերագառնան. այսպէս, ժողովրդի մէջ հետզհետէ կարօտ էին զարթեցնում գէպի հայրենիքի Ա. քաղաքը և աստուածապաշտութիւն (տես. Սաղմ. 102, 126 և 137): Պանդրիսութեան դատապարտուած հրէաներին կրօնական պաշտամունք, տեղական և հասարակական կազմակերպութիւն ազատ էր թողուած. նոքա իրանց կամքին համաձայն, ուր որ կամենումէին գաղթումէին և բնակութիւն էին հաստատում. նոքա այնտեղ մեծամեծ հարստութեանց տէր են դառնում, ձեռք բերելով բազմաթիւ կալուածներ և գերիներ:

սամբ հին երրայեցերէնը ժողովրդին անծանօթ էր և թարգմանութեան ու բացատրութեան կարօտ, ուստի և կազմուեց մի աւանձին դաս գրագէտների, որոնց ջանքն էր խոր թափանցել Ս. Գրքի մէջ, մանաւանդ օրինաց գրքերում, բացատրել և գործադրել այն ամենը, ինչ որ մինչև այդ ժամանակ պարզ և մէկին չէր և այսպէս ամեն կեանքի հանգամանքների համար ամենաճիշտ օրինական կանոններ հաստատուել:

Նոր կտակարանում գալիքներ զանազան անուններով են մեզ հանդիպում, նախ որպէս «գրագէտներ» (յուն. grammateis, Մատթ. 2, 4) բ. օրէնագէտներ» (յուն. Nomikoi Մատթ. 22, 35 համար. Ղուկ. 7, 30, 10, 25) և գ. որպէս «օրէնսուսոյցներ» (յուն. Nomodidaskaloi Ղուկ. 5, 17, գործ. առ. 5, 34): Նոցա ունեցած համարմունքը ժողովրդեան մէջ երևումէ նոցա տրուած տխուրօրէց. սովորաբար նոցա կոչու մէին «Ռաբ» կամ «Ռաբբի» (Մատթ.

ինչպէս որ ասորա — բարեկական սեպագրութիւնները մօտաւորապէս յոյց են տալիս:

Հրէից գերութիւնը, որ Ս. Գիրքը 70 տարի է դնում (Երեմ. 25, 11. համեմատ. 11, 12, 29, 10. Դան. 9, 2). իսկապէս 60 տարի է տեւում, Գերուածների Աւերոսի վերայ դրած յոյսը շուտով արգարանումէ, որովհետև Աւերոս Բաբելոն անելուն պէս թոյլ է տալիս հրէաներին, Դաւթի տնից Զօրարարէլի առաջնորդութեամբ հայրենիք վերադառնալ և Երուսաղէմը տաճարով հանդերձ վերականգնել. նա տալիս է նաև Քաղցիացիներից յափշտակուած տաճարի անօթները, Այս թոյլտուութիւնից օգուտ քաղեցին 42,360 հոգի, որոնք իրանց 7337 ծառաներով և աղախիներով, 200 երգիչներով և երգչուհիներով Երուսաղէմ վերադարձան (Եզր. 2, 64 համար). Սոցանից 29,829 պատկանումէին Յուդայի և Բենիամինի ցեղերին, իսկ մնացածը պիտի միւս ցեղերին պատկանած լինին, ինչպէս որ Ղուկաս Աւետ. 2. ասումէ թէ Աննա քահանայապետը Ասերի ցեղիցն էր, Վերադարձը եղաւ 537 ինչ, սակայն տաճարի շինութիւնը զանազան անյաջող հանգամանքների և դրացի ազգերի թշնամութեան պատճառով վերստին ընդհատուեց: Գերուածների մեծ մասը պանդխտութեան մէջ բոլորովին մոռացել էին իրանց հայրենիքը, և Աւերոսի տուած թոյլտուութիւնից բնաւ չօգտուեցին. սակայն յետոյ 459/58 ին Եզրասի առաջնորդութեամբ մօտ 2,000 հոգի, որոնց մեծ մասը քահանաներ էին, Պաղեստին վերադարձան (Եզրաս 7, 8):

23, 7) որ հայերէնի մէջ « Վարդապետ » բառով է թարգմանուած : Ամենից մեծ նշանակութիւն ունէին « Ռարբան » կամ « Րարբունի » տիտղոս վայելողները, ինչպէս նաեւ Յիսուսին կոչումէին (Մարկ. 10, 51. Յովհ. 20, 16) : Նոր կտակարանում այս երբայական տիտղոսը թարգմանուած « Տէր » բառով (յուն. Kyrios, Մատթ. 8, 25) կամ, « Վարդապետ-սէպէլ » (Didaskalos Մատթ. 8, 12) : նաեւ նոքա իրանց կոչել էին առջիս « հայր » (յուն. Pater, եբր. Abba) (Մատթ. 23, 9) նոքա իրանց աշակերտներից և ժողովրդից աւելի էին պահանջում վերոյիշած տիտղոսով իրանց կոչել քան թէ հայրը իր որդուց. նոքա կամենումէին ամեն տեղ և ամեն ժամանակ առաջին տեղ բռնել թէ սեղանի վերայ հաց ուտելիս և թէ ժողովարաններում, և պահանջումէին հրապարակների վերայ մարդկանցից ողջոյն ընդունել (Մատթ. 23, 6 Մարկ. 12, 38, Ղուկ. 11, 43) :

Նոքա իրանց գիտութիւնը գնահատումէին, բարձրագոյն աստիճանով և նոյնպէս փոքրիկ դատարաններում որպէս գրագէտներ և իրաւագէտներ. նոքա նախագահումէին, գլխաւորապէս որպէս քարոզիչներ՝ բացատրում և մեկնումէին Ա. Գիրքը ժողովարաններում և հրապարակներում, և վերջապէս որպէս ուսուցիչներ աշխատումէին երկտասարդներից օրէնագէտներ նախապատրաստել. նոքա ունէին իրենց համար առանձին ուսուցման սենեակ, որը Նրուսաղէմում տաճարի մէջ էր գտնւում (Ղուկ. 2, 46. 20, 1. Մատթ. 26, 55. Յովհ. 18, 20), այս տեղ էր, որ Յիսուս 12 տարեկան հասակում իւր իմաստուն հարցումներով և պատասխաններով ամենքին սքանչացնումէր. այս տեղ էր որ մի քանի ազդու քարոզներ ժողովրդին ուղղեց (Ղուկ. 20, 1. Յովհ. 18, 20) : Գասատուութեան միջոցին աշակերտները նստումէին գեանի վերայ, իսկ ուսուցիչը ունէր մի փոքր բարձրացած տեղ նստելու համար, ինչպէս որ Պօղոսի մասին յիշվումէ, թէ « նա նստած էր առ ռոս Գամաղիէլի » (Գործ. 22, 3) : Գասատուութեան եղանակը կայանումէր առաւելապէս հարցումների մէջ՝ որը ուսուցիչը առաջարկում էր, և պատասխանների մէջ, որը աշակերտը, կամ ուր որ պէտք էր՝ ուսուցիչը ինքն կըրտար. սակայն աշակերտն ևս կարող էր հարցումներ տալ (Ղուկ. 2, 46) : Աշակերտից երկու բան էին պահանջում. այն է, ուսուցչի ասածները ճշտիւ պահպանել յիշողութեան մէջ, և պատասխաններին պարտաւոր էր բառ առ բառ

և կէտ առ կէտ ասել այնամենք, ինչ որ միանգամ ուսուցիչը նորան հաղորդել էր: Աւաման հետ միասին պահանջումէին որ աշակերտը մի օրեւ է ձեռարուեստ սովորի, որպէս զի պէտք եղած միջոցին կարողանայ օրական ապրուստ հայթայթել: Այսպէս, օրինակ, Ռաբբի Հեղին իւր սնունդը ձեռք էր բերում օրավարձով, Յեսուան ասեղնագործ էր, Յովհաննան կօշկակար, Նոյնպէս Պօղոս առաքեալի մասին յայտնի է, որ նա իւր ծանր առաքելական ճանապարհորդութեան միջոցին, իւր ապրուստը ճարումէր իւր արուեստով, որովհետեւ խորանակար էր (Գրք. 18, 3. Ա. Թեսաղ. 2, 9. Բ. Թեսաղ. 3, 8): Այնու ամենայնիւ, երեւում է, որ դպիրները իրանց մտաւոր աշխատութեան համար վարձ էին ստանում, և սոցա վերայ է ճշմարտութեամբ Յիսուսի ասած այն խօսքը թէ՝ «ուսէք զառնայրեաց» (Մարկ. 12, 40): Նոյնպէս օրէնսուսոյց Հեղինի կեանքից յայտնի է, որ աշակերտ եղած միջոցին ուսման վարձ էր վճարում, բայց թէ ո՞րքան, այդ մասին մեզ ոչինչ յայտնի չէ:

Գալով Ս. Գրքի բացատրութեան, սա մի հատարակ մեկնութիւն չէր, այլ օրինական կանոնների ամենամանշան մասի անգամ ճիշտ որոշումն և սահմանումն. իսկ միւս կողմից՝ Ս. Գրքի խրատական մասի պաճուճումն, այս ինքն առնումէին մի քանի խրատական նախադասութիւն և իրանց կամքին համեմատ զարգարումէին զանազան բառերով ունկնդիրներին զիւրաւ մարտեցնել տալու համար: Այս երկու տեսակ բացատրութիւնները, կամ լաւ ևս ասած՝ յաւելուածները գրագէտների շնորհիւ աւանդաբար հասնում էր յետագայ սերնդին: Այս տեսակ աւանդութեան օրինական մասը կոչումէին Հալախայ, իսկ ոչ — օրինական, այսինքն խրատական մասի բացատրութիւնը — Հագգադա: Յետին ժամանակում այս վերոյիշեալ երկու մասերն ևս ներմուծուած են Քալմուդի և Միգրաշիմի մէջ: Հալախան գլխաւորապէս ներմուծուած է Քալմուսի մէջ և բաժանւումէ երկու մասի, Ա. մասը կոչւումէ Միշնա, և վերջնականապէս խմբագրուած է Քրիստոսից յետոյ երկրորդ դարում, իսկ Բ. մասը — Գեմարա, որ ըստ իւր բովանդակութեան բաւական նման է աւագինին և բաժանւումէ երկու փոքր հատուածի. Պաղեստինական Գեմարա 350 ին Տիրերիայում, և Բաբելոնական՝ 550 ին Սուրայում վերջնականապէս խմբագրուած: Հագգադական (ոչ-օրինական) սարքեր գտնւում են գլխաւորապէս Միգրաշիմի մէջ, և խմբագրուած է Միշնան սկը-

առեւելաց փոքր ինչ յետոյ: Արդէս ամենահին Մէլլաշ համարում էր Աթուրացւոց լեզուի գտնուած թարգմանութիւն. «գիրք Յութեանների» վերնագրով, որը Քրիստոսի Ա. դարում կազմուած է: Այս գիրքը ըստ իւր բովանդակութեան նման է մեր ծննդոց գրքին, և դորա համար անուանել են «Ժողովի Ժննդ» . պատմումէ աշխարհի ստեղծագործութիւնից մինչև հրէից զատկական տօնի (պտտեքի) հաստատուելը յետին հրէաների հասկացողութեան և հոգուն համաձայն:

Մակաբայեցւոց ժամանակից մինչև Նրուսաղէմի աւերումն գրագէտների ամենանշանուոր անունները զոյգ զոյգ են յիշատակւում: Նոցա մէջ մեծ համարմունք և նշանակութիւն ունի Հեղի քահանայապետը, որ Քրիստոսից փոքր ինչ առաջ էր ապրում: Սա նշանաւոր էր ոչ թէ միայն նորանով, որ նա կամենումէր օրինաց առանձին մասերն ի մի ընդհանուր օրէնքի վերածել և կանոններ սահմանել, այլ իւր ամբողջ անձնաւորութեամբ, գրոց ուղիղ հասկացողութեամբ և իւր ճարտարափօսութեամբ: Նա Բաբելոնից Պաղեստին էր գաղթել և դառն աշխատութեամբ պիտի իւր ապրուստը գտնէր, սակայն իւր աշխատութեամբ և բռնած գիրքով մեծ համարմունք և հեղինակութիւն է փայելում իւր ժամանակի գրագէտների մէջ: Նա հեղ և խոնարհ էր և օրէնքի կատարման վերաբերմամբ իրան շատ չափաւոր էր ջոյց տալիս: Աորան բոլորովին հակադատիկ հանդիսանումէ իւր ժամանակակից ընկեր Նամմայի, որի թէ բնաւորութիւնը և թէ վարդապետութիւնը շատ կոշտ ու կոպիտ էր. նա ամեն խտտութեամբ հետևումէր օրէնքին, մինչև անգամ՝ աշխատումէր տառ առ տառ կատարել և կատարել տալ: Այսպէս, նա կամենումէր իւր ամենափոքր, ծծկեր երեխային ծով պահել տալ մեծ տօնի համար: Այս երկու ուղղութիւնները, որոնց ներկայացուցիչ երկու վերոյիշեալ քահանայապետներն էին, ունեցան իրանց հետևողներ, բայց Հեղիի հետևողները աւելի շատ էին, որովհետև նորա՝ Ժողովրդին յայտնած գաղափարները օրէնքի կատարման վերաբերմամբ Ժողովրդի գործնական կեանքին շատ էր համապատասխանում: Հեղիի թուռներից նշանաւոր է համարում Քրիստոսի ժամանակակից Գամաղիէլ, որ Նրուսաղէմի կործանման 18-որդ տարին է մեռել: Նա այնպիսի բարձր հեղինակութիւն ունէր, որ նորան տալիս են «Ռարբան» ակադոս, և թէ, նորա մահից յետոյ ասումէին որ

օրէնքը իւր նշանակութիւնը կորցրել է: Թէ նա նախագահի պաշտօն է վարած ոչինչ տարակուսութեան չէ ենթարկուիմ: որովհետեւ հրէից մէջ սովորութիւն էր առ հասարակ, որ այն տարուայ քահանայապետը ժողովներին կամ ատեաններում նախագահէր: Վամադիէլը քրիստոնեաներին յայտնի է, որպէս Պօղոս առաքեալի ուսուցիչ (Պրծ. 22, 3), և Քրիստոնէութեան մասին իւր գատալճաով առաքեալների բարձրագոյն ատեանի առաջ կանչուած ժամանակ, զի եթէ իմարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ գործ՝ քակտեսցի, ապա թէ յԱստուծոյ է՝ ոչ կարէք քակտել զդասա, գուցէ և աստուածամարտք գտանիցիք, (Պրծ. 5, 38, 39):

Այս մեծ քահանայապետներից յետոյ յիշվում են շատ մանր դպիրներ (գրագէտներ), որոնց գլխաւոր նպատակն էր Ս. Վիրքը, մանաւանդ օրինաց գիրքը, թէ տեսականապէս և թէ գործնականապէս մեկնել և բացատրել, աշխատել որքան կարելի է Սովորական օրէնքը սուրբ պահել և պահպանել տալ ժողովրդեան: Սակայն նոցա բռնած ընթացքը հեազհետէ սխալ ուղղութիւն ստացաւ. այնպէս որ, Քրիստոսի ժամանակը Ս. Վիրքը փոխանակ իւր ներքին իմաստով և հոգով ըմբռնելու, հետեւումէին միայն օրինաց արտաքին մասին և Ս. Վրքի ասածները տառ առ տառ կատարել տալուն, որով մեծ արգելք էին գնում Քրիստոսի գաղափարները գիւրաւ ժողովրդի մէջ տարածուելուն:

Արդէն Յիսուս մի իրական ձեռք է ցոյց տալիս նոցա օրէնքի խրատապահութեան վերաբերմամբ, հարցնելով (Մատթ. 12, 11) թէ «ի՞նչ պիտի անել, եթէ որ շաբաթ օր մի կենդանի խորխորատ ընկնի». Նա շատ լաւ էր իմանում, որ նոցա մի քանիսը կարծումէին թէ, պիտի մինչեւ երեկոյ խորխորատի մէջ պահել, իսկ միւսները՝ — պէտք է ազատել: Այսպէս հեազհետէ հարցեր էին բարձրացնում, թէ պէտքէ արդեօք գիւղացին կոյի՞ն ծնելիս օգնէ թէ ոչ, և կամ շաբաթ օր կենդանուն ջուր տալ ևլն: Պապիւնները ամեն կերպ աշխատումէին շաբաթը խտախ պահպանել տալ (Մատթ. 12, 12), շաբաթ օր չըպիտի պատերազմէին (Ա. Մակե. 2, 39 հմր.), միմիայն թոյլ էր տրուած իրանց անձը պաշտպանել թըշնամու գէմ: Այդ օրը, այսպէս ասած, շաբաթուայ ճանապարհ (Պրծ. 1, 12), այսինքն 2000 քայլից աւելի գնալը և կամ որ և է աշխատութիւն կատարելը խտախ արգելուած էր: Ռաբբիները պիտի հսկէին 39 գլխաւոր աշխատութեանց վերայ, որ այդ օրը

չը կատարեն, այն է՝ ցանկելու, հնձելու հերկելու, պարանի հան-
գոյցներ քակելու, կրակ վառելու և հանգցնելու, նոյնը տեղա-
փոխելու ևլն, վերայ: Նոյնպէս արգելուած էին այնպիսի գործո-
ղութիւններ, որոնք կարող էին շարաթը պղծել տալ. այսպէս
օրինակի համար, գրագիրը չէր կարող իւր եղեգնով, դերձակը
իւր ասեղով շաբաթամտին դուրս գնալ, որովհետեւ կարող էին
մոռանալ. և երբ շարաթը արդէն մտած լինէր պիտի վերցնէին,
որով և, նրանց կարծիքով, մեծ մեղք գործած կլինէին: Շաբաթ
օրը թոյլ էր տրուած առ առաւելն թլփատութիւն (Յովհ. 7, 22)
և վտանգի մէջ ընկնողին օգնութիւն հասցնել, այնու ամենայնիւ
Քրիստոսի կեանքի պատմութիւնից իմանումենք, որ նախանձայոյզ
հրէաներին շաբաթ օր հիւանդին բժշկելը մի անօրինակ բան է
թւում: Թէև հասկ կորզելը և ուտելը քաղց յագեցնելու հա-
մար թոյլատրուած էր, սակայն այս ևս շաբաթ օր խստիւ էին
պահում (Ղուկ. 6, 2):

Որպէս զի Աստուծոյ անունը անտեղի կերպով չը գործածեն,
արգելուած էր նորա (Նահովայ Նալէ) անունը արտասանելը, և
նորա տեղ միշտ պիտի կարդային «Ազոնայի», Նօթանասնից
թարգմանութեան մէջ «Kyrius» Տէր: Նոքա իրանց տրուելիք տա-
սանորդի վերայ, այնէ անանուխի, չամանի և սամիթի, մեծ աչք
էին դարձնում, իսկ ծանր և գլխաւոր օրէնքները զանց էին առ-
նում (Մատթ. 23, 23): Դւ եթէ Քրիստոս նոցա ասումէ
(Մատթ. 23, 22)՝ «զմթղուկս քամէք և զուխտս կլանէք», դո-
րանով կամենումէր ցոյց տալ, թէ ինչպէս խստակրօն հրէաները՝
գինու մէջ խեղդուած մանր կենդանիները կուլ չըտալու համար,
ամեն զգուշութեամբ աշխատումէին գինին քամել և այնպէս
խմել: Միւսնոյն տեղում՝ դատապարտումէ Տէրը դպիրներին իրանց
չափազանց մաքրութեան համար (Մատթ. 23, 25): Նոքա հարց
էին բարձրացնում, թէ ինչ տեսակ ամաններ մարդու կարող են
պղծել. թէ զանազան տեսակ մաքրութեանց համար ինչ տեսակ
ջուր պիտի գործ դնել, օրինակ ձեռները սրսկելու, ամաններ
ընկղմելու, մարմինը ամբողջապէս մաքրելու համար ևլն: Ձեռ-
ների լուացման վերաբերմամբ որոշուած էր, թէ ինչ տեսակ ամա-
նում պիտի լուանային, ով պիտի ջուր ածէր և դուրս թափէր:
Ինչպիսի գէպքում ձեռները պիտի ընկղմէին և կամ միայն մատ-
ների ծայրերը լուանային:

Սոյնպէս աղօթքն ևս ստացել էր լոկ ձեւականութիւն և իւր ներքին նշանակութիւնը գրեթէ կորցրել էր: Հրէաների գլխաւոր աղօթքներն էին գոհացողական և հաւատոյ աղօթքներ, որոնք սահմանած ժամանակում պիտի կատարուէին: Օրը քանի անգամ և որ ժամանակ աղօթք պիտի ասէին պարզ որոշուած էր որպէս երրորդ (Պործ. 2. 15) վեցերորդ (Պործ. 10, 9) և իններորդ (Պործ. 3, 1. 10, 30) ժամեր: Հաւատոյ աղօթք ասելիս կանխապէս հարցնումէին, թէ քանի անգամ իրար պիտի ողջունէին: Օրինաց նախանձայոյզները, երբ որ նշանակեալ ժամանակը կը մօտենար՝ կըսկսէին աղօթել հրապարակների վերայ և կամ անկիւններում, բայց շատ անգամ ի ցոյցս մարդկան, որպէս զի նոցանից փառաւորուեն (Մատթ. 6, 5): Թէ և դոցա մէջ գեղեցիկ սովորութիւն կար ճաշի նստելիս աղօթել, բայց այս ևս ծայրայեղութեան էր հասած, այնպէս որ ամեն մի բան ճաշակելիս առանձին սահմանած կանոններ կային, ինչպէս գինի կամ պտուղ, հաց կամ կանաչեղէն ճաշակելիս ևլն: Պահանջումէին և մինչև անգամ ստիպում որ եռանդով աղօթեն, այսպիսով շատերը աղօթումէին միայն օրինական պարտք կատարելու համար, որոնց վերայ Նսայեայ խօսքը արգարանումէ՝ ասելով «մերձ է առիս ժողովուրդս այս բերանով իւրով, և շրթամբք իւրեանց պատուեն զիս, ուսուցանին զմարդկան պատուէրս և զվարդապետութիւնս» (Նսա. 29. 13 Մատթ. 15, 7): Նոյնպէս և պահքի վերաբերմամբ շատ խիստ էին դպիրներն ու փարիսեցիները՝ տալով նորան մեծ նշանակութիւն (Մատթ. 9, 14. Ղուկ. 5, 33): Նոքա ծով էին պահում շաբաթուայ մէջ երկու անգամ, երկու շաբթի՝ որովհետև այդ օր Մովսէս Սինայ էր բարձրացել, և երեքշաբթի՝ յորում Մովսէս Սինայից իջել էր: Բացի սորանից պատահումէին նա և արտաքոյ կարգի պահոց օրեր, օրինակ եթէ անձրևային եղանակի գալը փոքր ինչ ուշանումէր: Նատերը իրանց ազատ կամքով ամբողջ տարին շաբաթը երկու անգամ ծով էին պահում, որպէս փարիսեցին տաճարի մէջ իրան յայտնապէս գովում էր և պարծենում. «պահեմ երկիցս ի շաբաթու», ևլն. (Ղուկ. 18, 12.) Նոքա այնպէս էին համոզուած, որ եթէ յաճախ ծով պահեն մարմինը լկելով, Աստուծոյ օրհնութիւնը միշտ նոցա վերայ կըլինի:

Ի հարկէ կային նաև այնպիսի օրէնստեսոյցներ, որոնք բոլոր սրտով և հոգւով հետամուտ էին լինում Ս. Գրքին և մեղ թողած

են մի քանի գեղեցիկ խօսքեր, որոնք շօշափում են կրօնի ներքին մասը: Օրինակ Անտիգոնոս Զ' ռիսոն ասում է, « ճշմարիտ Աստուծոյ ծառան նա է, որ առանց մի որ և է վարձի ակնկալութեան ծառայութիւն է մատուցանում »: Իսկ Ռարրի Յուդան ասում է, « Քո երկնաւոր հօր կամքը կատարելու մէջ եղիր արի՛ որպէս ընձուղտ, թէթե՛ որպէս արծիւ, արագ՝ ինչպէս միեղջերու, և զօրեղ՝ որպէս առիւծ »: Այնու ամենայնիւ այն ժամանակուայ գաղիւնների և վարիսեցիների մէջ տիրապետում էր սնտիառութիւն և շահասիրութիւն, նորա իմանումէին միայն հրամայել ժողովրդին, իսկ իրանց պատուիրածները երբէք չէին կամենում կատարել, որի համար Քրիստոս նախատեսելով ասում է՝ « կապեն զբեռինս ծանունս և գնեն ի վերայ ուսոյ մարդկան, և մատամք իւրեանց ոչ կամին շարժել »: Օրէնքի արտաքին մասը միշտ ամեն բանից վեր էին դասում իսկ ներքին մասը գնալով իւր նշանակութիւնը կորցնում էր. գլխաւոր բանը նոյա մէջ համարվում էր ծոմազահութիւնը, տասանորդ ստանալն ու մաքրութիւնը: Արօնական և բարոյական, սրտի և կեանքի գլխաւոր պահանջները երեսից թողուած էին (Մատթ. 23, 25), որով հետզհետէ զգալի էր դառնում Աստուծոյն հոգւով և ճշմարտութեամբ ծառայելը (Յովհ. 4, 23, 24):

Օրէնքի ճշմարիտ և կատարեալ հասկացողութիւնը մեզ յայտնի եղաւ Քրիստոսով, որը իշխանութիւն ունեցողի պէս էր ուսուցանում, և ոչ թէ գաղիւնների նման (Մատթ. 7, 29): Նա մեզ շատ պարզ բացատրել է հին կտակարանի նպատակը, այն է մարդկային փրկութիւն և վերականգնումն Աստուծոյ հաղորդակցութեամբ և օրէնքի անանցանելի նշանակութիւնը ի լոյս հանեց (Մատթ. 5, 17), ազատելով օրէնքի արտաքին ձեւականութիւնից. միւսայն ժամանակ պահանջում էր ճշմարիտ օրէնքի կատարումն հիմնուած առ Աստուած ունեցած կատարեալ հնազանդութեան վերայ, այն, հնազանդութիւն, որ ճշմարիտ հաւատքից և սիրուց է յառաջանում: Ի հարկէ, այսպիսով նա օրէնսուսոյցների թշնամանքը դառնութեամբ պիտի տանէր. նորա շատ էին նորա յետեւից ընկնում, թէ արդեօք նա օրինաց դէմ է գործում (Ղուկ. 6, 7: 11, 54) թէ ոչ. շատ անգամ քրթմնջելով պարսաւում էին նորա յայտնած մտքերը և բարոյական գաղափարները (Մատթ. 9, 3: Ղուկ. 5, 30: 15, 2) որոնումէին նորան շինծու հարցումներով բռնել (Մատթ. 22, 35, Ղուկ. 10,

25) և երբ նորան ոչ մի բանի մէջ չըկարողացան բռնել, շատ դառնացան, և այս՝ այն աստիճանին հասաւ, որ նորան ի մահ դատապարտեցին խաչի վերայ (Ղուկ. 20 19, 19, 48):

Այս յօդուածով, իմ նպատակս էր, մի համառօտ գաղափար տալ ընթերցողներին աւետարանի մէջ յիշուած դպիրների հոգւոյ ընթացքի և ուղղութեան մասին, որոնք ժամանակին մեծ գերեւն խաղացած և որոնց մէջ արտափայլում են փառամոլութիւն, եռասիրութիւն և շահասիրութիւն, ինչպէս որ արդէն տեսանք վերայիշածիս մէջ:

Սարգիս Տ. Գարրիէլեանց.

Լ. Վ. Պ. Գ.

ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ.

. . . ԽՏԷՊԷՐ . . . Հայր.

Ինչմէ գրաւոր տեղեկութիւն ուղեցիր հայրենեացս — Խարբերդի և անտի ցայս վայր ճանապարհորդածս տեղերու վերայ, զոր ահաւասիկ յօժարութեամբ կը փութամ կատարել՝ քաղելով զայն իմ օրագրութենէն:

Խարբերդ քաղաքը շինուած է մի բարձր լեռան վերայ առաջէն ունենալով իւր երկու բարերեր դաշտերն — Լ. օվայ և Խ. օվայ: Իւր գլխաւոր բերքերն են ցորեան, բամբակ, խաղող՝ յորմէ ընտիր գինի կը պատրաստուի, լուրիա, կտաւատ, մեղրապօպ (ձմերուկ), սեխ, բրինձ և ըն: Արտադրութիւնքն են բամբակ, գինի, սեկ, սպիտակ կտաւ, և երկու գործարաններէն դուրս եկած լաւագոյն չէթարին, որոյ ապրշումն տեղն առաջ կը գայ: Գաւառին առաջնորդն է երեք տարիէն ի վեր Յակոբոս Եպիսկոպոս Ճգնաւորեան, իսկ կառավարիչն՝ Հաճի - Հասան Պէյ անուն անձն, որ նոր եկաւ: Այժմ տեղւոյն երկրագործը իւր արմըտեաց դիւրագնի վաճառման առթիւ շատ կը նեղուի, որմէ առաջ եկած է վաճառականաց և զանազան առեւտուրականների գործի դադարումն և ազգ. դպրոցների անկումն: Հէգ մանկուկն Հայոց Խարբերդի կանայժմ թափառական աստեանդ, ծարաւի ուսման, կարօտ դաստիարակութեան: Ո՞վ է որ պիտի կարեկցի նոցա վերայ. իւրեանց ծնողքն արդէն ունեցած ատենին էին անկարեկից, որք այժմ կը կրին ստակի խիստ թանկութիւնը: Խարբերդի հայն ունի մի անբաղդութիւն ևս, — նա Ս. Էջմիածնի Մայր Աթոռոյ Ճեմարանը չը փափաղեցաւ զրկել զոք ու-